## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 նոյեմբերի 2020թ. N 374-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՑԱԽԱՆՈՑՆ ՈՒ ԶՈՒԳԱՐԱՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-13-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի և 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման, հաշվի առնելով, որ ցախանոցն ու զուգարանը կառուցված չեն ու չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ և հիմք ընդունելով N 24062020-07-0004 սեփականության վկայականը ու Նորվարդ Ժորիկի Ղարսայանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Մարզ Կոտայք համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Այգեգործական տարածք 11-րդ թաղամաս 14 հասցեում գտնվող անշարժ գույքը վերահասցեավորել.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Ուրց թաղամաս 11-րդ փողոց 14:

2.Նորվարդ Ժորիկի Ղարսայանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Ուրց թաղամաս 11-րդ փողոց 14 (ծածկագիր՝ 07-051-0101-0288) հասցեի 0.05 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության ընդհանուր 8.9 քմ արտաքին (8.06 քմ ներքին) մակերեսով ցախանոցն ու զուգարանը ճանաչել օրինական:

3. Նորվարդ Ժորիկի Ղարսայանին՝ համայնքապետարանի 900105202213 հաշվեհամարին վճարել 5874 (հինգ հազար ութ հարյուր յոթանասունչորս) դրամ՝ 8.9 քմ արտաքին մակերեսով ցախանոցի ու զուգարանի օրինականացման վճար:

4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում Բյուրեղավանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Հաստատել որոշման անբաժանելի մասը կազմող «ԳԻՍ-ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տված վերոնշյալ հողամասի ու շինությունների հատակագիծը:

6.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. նոյեմբերի 23
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

25 նոյեմբերի 2020թ. N 375-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596- Ն որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունելով Գևորգ Սուրենի Արզումանյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Նուռնուս այգեգործական տարածք 14-րդ տեղամաս 48 (ծածկագիր՝ 07-051-0143-0024, վկայական N 21082020-07-0155) հասցեի բնակելի կառուցապատման հողամասում առկա բնակելի նպատակային նշանակության այգետնակին (նկուղ և աստիճան) 1 (մեկ) հարկանի այգետնակ ու աստիճաններ վերակառուցելու և պարիսպ կառուցելու նպատակով Գևորգ Սուրենի Արզումանյանին տալ շինարարության թույլտվություն՝ համաձայն հաստատված նախագծի:

2. Գևորգ Սուրենի Արզումանյանին՝ համայնքապետարանի 900105202247 հաշվեհամարին վճարել 15 000 (տասնհինգ հազար) դրամ՝ տեղական տուրք շինարարության թույլտվության համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. նոյեմբերի 25
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

26 նոյեմբերի 2020թ. N 376-Ա

### ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 360-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի և հիմք ընդունելով Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Դանիել Դանիելյանի զեկուցագիրը՝ *որոշում եմ.*

1.Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2020 թվականի հոկտեմբերի 28-ի «Ինքնակամ կառուցված օժանդակ շինության և ավտոտնակի նկատմամբ Բյուրեղավան համայնքի սեփականությունը ճանաչելու, հասցե տրամադրելու և պետական գրանցում կատարելու մասին» N 360-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ որոշման վերնագրում, 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում «օժանդակ շինություն» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «ավտոմասի պահեստ» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. նոյեմբերի 26
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 նոյեմբերի 2020թ. N 377-Ա

### 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ԱՐՑԱԽՈՒՄ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՎԻՐԱՎՈՐՎԱԾ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿԱՄԱՎՈՐ, ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԵՎ ՄՈԲԻԼԻԶԱՑՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի և հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի N 17-Ն որոշմամբ հաստատված կարգը և սոցիալական աջակցության հանձնաժողովի առաջարկությունը՝ ***որոշում եմ.***

1.Սոցիալական պաշտպանության բնագավառում համայնքի ղեկավարի սեփական լիազորությունների իրականացման նպատակով համայնքի 2020 թվականի բյուջեից տրամադրել 850000 (ութ հարյուր հիսուն հազար) դրամ՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախում սանձազերծված պատերազմի հետևանքով վիրավորված Բյուրեղավան համայնքի բնակիչներ հանդիսացող կամավոր, ժամկետային և մոբիլիզացված զինծառայողներին դրամական օգնություն հատկացնելու համար՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանին՝ կատարել սույն որոշման 1-ին կետում նշված գումարների հատկացումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. նոյեմբերի 27
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 նոյեմբերի 2020թ. N 378-Ա

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 25-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 138-րդ և 139-րդ կետերի ու հիմք ընդունելով Մարգարիտ Համբարձումի Ղուկասյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Մարգարիտ Համբարձումի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 32/80 (ծածկագիր՝ 07-003-0020-0067, վկայական N 12082019-07-0038) հասցեի հասարակական կառուցապատման հողամասում կառուցված 1 (մեկ) հարկանի հասարակական նպատակային նշանակության խանութի համար տալ ավարտական ակտ (շահագործման թույլտվություն):

2.Մարգարիտ Համբարձումի Ղուկասյանին՝ համայնքապետարանի 900105202163 հաշվեհամարին վճարել 20 000 (քսան հազար) դրամ տեղական վճար՝ շահագործման թույլտվության ձևակերպման համար:

3.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

Подписано: BALASYAN HAKOB 3009590148

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. նոյեմբերի 27
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ
(ՀՀ մարզ, համայնք)

# ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

N26 25 նոյեմբերի 2020 թ.

Տրված է կառուցապատող Գևորգ Սուրենի Արզումանյան (ք. Երևան, Րաֆֆու 19-21բն), հեռ.091611011____–ին
(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հողամասի գտնվելու վայրը)

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Նուռնուս այգեգործական տարածք 14-րդ տեղամաս 48 (ծածկագիր՝ 07-051-0143-0024) հասցեի բնակելի կառուցապատման հողամասում գոյություն ունեցող այգետնակին (նկուղ և աստիճան) 1 (մեկ) հարկանի այգետնակ ու աստիճաններ վերակառուցելու և պարիսպ կառուցելու (II կատեգորիա) միջին ռիսկայնության աստիճան ____________________օբյեկտի
(օբյեկտի անվանումը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

____________________ շինարարական աշխատանքների կատարման, այդ թվում՝ (նոր կառուցման, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման և այլն) կառուցապատվող հողամասի գլխավոր հատակագծի վրա նշված ոչ հիմնական կառույցների ____________________
---------------------- տեղադրման համար:
(նշվում են ոչ հիմնական կառույցների անվանումները)

1. Օբյեկտի նախագծային փաստաթղթերը՝

1) մշակվել են «Էլզա Պրոջեքթս» սահմանափակ պատասխանատվությամբ
(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների
ընկերության ________ տնօրեն՝ Ս. Հովսեփյան__ արտոնագիր՝ ԿԵԴ Ա2-011______________կողմից.
կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

2) ստացել է (են) *22.10.2020 թ . N Փ518-20* փորձագիտական դրական եզրակացությունը (եզրակացությունները)
____________ պարզ փորձաքննություն, լիցենզիա NՔՊԼ17063 ____________
(նշել փորձաքննության տեսակը)

____________________________________________ կողմից
(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) անվանումը, լիցենզիայի համարը)

կամ

նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագիրը՝ ____________________.
(նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրի համարը)

3) սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների
Բյուրեղավան համայնքի ____________________ հետ:
(նշել մարմինների անվանումները և համաձայնեցման ժամկետները)

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել 24 ամիս ընթացքում
(նշել շինարարության նորմատիվային տևողությունը)

Ներառյալ ավարտական ակտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն՝ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:
2.1. Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը
[] ավարտական ակտի տրամադրումից---------------------- ամսվա ընթացքում
[+] ավարտական ակտի տրամադրման օրը:

Ներառյալ ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

3. Շինարարության վարման մատյանը բաղկացած է 14 թերթից, կարված և դրոշմակնքված է ____________ Բյուրեղավանի համայնքապետարանի ____________ կողմից:
(իրավասու մարմնի անվանումը)

4. Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են (լրացվում է N 1 հավելվածի 108-րդ կետով նախատեսված դեպքերում)
____________________ կողմից

(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու մարմնի ________________________ և այլ
(նշել իրավասու մարմնի անվանումը)

շահագրգիռ մարմինների ________________________ հետ:
(նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները.

3) *(լրացվում է N 1 հավելվածի 84-րդ կետով սահմանված դեպքերում)* սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը

________________________

________________________ :

(նշվում են նախապատրաստական, հողային, շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքներ)

6. *(լրացվում է N 1 հավելվածի 116-րդ կետով սահմանված դեպքերում)*
Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա ________________________ համարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության (շինությունների) ________________________ քանդման՝
(նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

սեփականատիրոջը (օգտագործողին) ________________________ տրված սույն
(նշվում է պետական գրանցման վկայականի համարը)

թույլտվությունը նաև քանդման թույլտվություն է:
Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7. Այլ պայմաններ ________________________:
(նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8. Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ, համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի, տեղեկացնում է իրավասու մարմնին:

9. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ________________________ Հ. ԲԱԼԱՅԱՆ
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ. Տ. Դ. Դանիելյան
Հեռ. 022265205

*Հավելված*
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2020 թվականի նոյեմբերի 27-ի № 377-Ա որոշման

2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ԱՐՑԱԽՈՒՄ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՎԻՐԱՎՈՐՎԱԾ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿԱՄԱՎՈՐ, ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԵՎ ՄՈԲԻԼԻԶԱՑՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՎՈՂ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ

| ՀՀ | Ազգանուն, անուն, հայրանուն | Հասցեն | Գումարի չափը (դրամ) |
|---|---|---|---|
| 1 | Գուրգեն Հուսիկի Ումրոյան | Բյուրեղավան համայնք, գ. Ջրաբեր 3 փողոց 13 տուն | 50 000 |
| 2 | Գագիկ Սերգեյի Մնացականյան | Բյուրեղավան համայնք, գ. Ջրաբեր 3 փողոց 9 տուն | 50 000 |
| 3 | Արմեն Հրաչիկի Շաբուրյան | ք. Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 15 շենք 4 բնակարան | 50 000 |
| 4 | Հովհաննես Վահրամի Հովսեփյան | ք. Բյուրեղավան Երիտասարդական փողոց 5 շենք 37 բնակարան | 50 000 |
| 5 | Վահե Վաչիկի Աբովյան | ք. Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 30 շենք 2 բնակարան | 50 000 |
| 6 | Ազատ Անդրանիկի Մաթևոսյան | ք. Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 31 շենք 37 բնակարան | 50 000 |
| 7 | Անժելա Նիկոլայի Ազարյան | ք. Բյուրեղավան Կոտայքի փողոց 35 շենք 58 բնակարան | 50 000 |
| 8 | Սամվել Հրաչիկի Խաչատրյան | ք. Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 31 շենք 36 բնակարան | 50 000 |
| 9 | Արմեն Ֆելիքսի Պողոսյան | ք. Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 25 շենք 28 բնակարան | 50 000 |
| 10 | Համիկ Առուստամի Հայրապետյան | ք. Բյուրեղավան Կոտայքի փողոց 35 շենք 15 բնակարան | 50 000 |
| 11 | Սլավիկ Ռաֆիկի Սահակյան | Բյուրեղավան համայնք, գ. Նուռնուս գլխավոր փողոց 21 տուն | 50 000 |

| | | | |
|---|---|---|---|
| 12 | Կարինե Մասիսի Սարգսյան | ք. Բյուրեղավան Սամվել Վարդանյան փողոց 10 շենք 15 բնակարան | 50 000 |
| 13 | Նունուֆար Աշոտի Մուշեղյան | ք. Բյուրեղավան Օղակաձև փողոց 50 շենք 7 բնակարան | 50 000 |
| 14 | Կալեպսի Վանյաի Հակոբյան | ք. Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 26 շենք 20 բնակարան | 50 000 |
| 15 | Սուսաննա Սուրենի Խաչատրյան | ք. Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 26 շենք 32 բնակարան | 100 000 |
| 16 | Քրիստինե Մանվելի Բաբայան | ք. Բյուրեղավան Կոտայքի փողոց 35 շենք 51 բնակարան | 50 000 |
| Ընդամենը | | | 850 000 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՀԱՄԱՅՆՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ
(ՀՀ մարզը, համայնքը)

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ)

N4 27 նոյեմբերի 2020 թ.

Կառուցապատող Մարգարիտ Համբարձումի Ղուկասյանին (ք. Բյուրեղավան 29շ.14բն. բնակիչ), հեռ.077719121 կողմից
(իրավաբանական անձի անվանումը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

կառուցված 1 (մեկ) հարկանի հասարակական նպատակային նշանակության խանութը,
(օբյեկտի անվանումը)

որը գտնվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 32/80 (ծածկագիր՝ 07-003-0020-0067) հասարակական կառուցապատման հողամաս հասցեում՝
(օբյեկտի տեղադրությունը, հասցեն)

համարվում է ավարտված և պատրաստ է շահագործման, որի՝

1. նախագծային փաստաթղթերը մշակվել են «ԳԱԳՆԱԽՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ
(նախագծային կազմակերպության անվանումն օրենքով սահմանված դեպքերում՝ լիցենզիայի համարը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, լիցենզիայի համարը)
ընկերության (Արտոնագիր ՃԱԴ-Ա1-012, ԿԵԴ -Ա2-025, լիցենզիա՝ ՔՊԼ 17011, տնօրեն՝ Գ. Ղազարյան) կողմից.

2. շինարարությունն սկսվել է ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի կողմից
(շինարարության թույլտվություն տվող մարմնի անվանումը)

տրված 14.10.2019 թ. N 14 շինարարության թույլտվությունների համաձայն.

3. շինարարությունն իրականացվել է <<ՀՈՎԱՐ ՇԻՆ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից
(գլխավոր կապալառուի անվանումը)

առկա է շինարարական կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացություն

4. օբյեկտի հիմնական ցուցանիշներն են՝ 1 (մեկ) հարկանի խանութ

5. հատուկ պայմանները խանութը կառուցված է ոչ էական շեղումներով

ՀԻՄՔԵՐ՝

1) կառուցապատողի դիմումը 24.11. 2020 թ.
2) ընդունող հանձնաժողովի ակտը 16. 11. 2020թ.
3) կառուցապատման փաստաթղթերի ցանկը կամ շինության տեխնիկական վիճակի մասին համապատասխանության հավաստման դրական եզրակացությունը 35 թերթ և 3 թերթ տեխնիկական եզրակացություն.

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավար

(ստորագրությունը)

Հ. Բալասյան
(անունը, ազգանունը)

Կ. Տ. Դ. Դանիելյան